Վ. Դ. ՍԵՎՅԱՆ

ՀԱՅ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1921—1925 ԹԹ.)

Հայ կոմերիտական, մասնավորապես տեղական մամուլի պատմության մեջ փառավոր էջ են կազմում սկզբնական կոմերիտական կազմակերպությունների տպագիր օրգանները և կոմերիտական միօրյա թերթերն ու կոչերը։ Դրանք կարևոր դեր են խաղացել երկրի ժողովրդական տնտեսության առջև կանգնած ամենահրատապ խնդիրները լուծելու, կուսակցության կողմից անցկացվող կամպանիաներում պատանիների և աղջիկների ակտիվ մասնակցությունը ապահովելու, նրանց կոմունիստական ոգով դաստիարակելու գործում։ Դրանից զատ, կոմերիտական մամուլը ընդհանրապես, և տեղական մամուլը մասնավորապես հետազոտողներին հարուստ նյութ են տալիս տվյալ ժամանակաշրջանի պատմությունն ուսումնասիրելիս։ Մինչդեռ երիտասարդական հենց այս օրգանների պատմության խիստ հետաքրքիր և կարևոր էջեր դուրս են մնացել պատմաբանների տեսադաշտից և չեն դարձել գիտական ուսումնասիրության առարկա։

1921 թ. կոմերիտմիության Երևանի կոմիտեն, կուսակցական օրգանների անմիջական ղեկավարությամբ ձեռնարկեց մի շարք միջոցառումներ հիմնարկ-ձեռնարկություններում կոմերիտական կազմակերպություններ ստեղծելու և ամրապնդելու ուղղությամբ։ Քաղաքում ստեղծվեցին 11 կոմերիտական բջիջներ[1], այդ թվում նաև տպագրական բջիջը[2], որն, ի դեպ, խոշոր դեր էր խաղում Երևանի կոմերիտական կազմակերպությունների կյանքում։ 1922 թ. նրա անդամների թիվը հասնում էր 35 հոգու, որից բանվորներ էին 25-ը, ծառայողներ՝ 10-ը։ Եվ առհասարակ, 20-ական թվականներին Երևանի արդյունաբերության մեջ իր տեսակարար կշռով աչքի ընկնող տեղ էր գրավում պոլիգրաֆ արդյունաբերությունը, որտեղ աշխատում էին հսկայական թվով երիտասարդ բանվորներ։

1922 թ. հուլիսից տպարանի կոմերիտական կազմակերպությունը սկսեց հրատարակել իր ձեռագիր օրգան պատի թերթը՝ «Տպագրական բանվոր»-ը։ Մինչև 1922 թ. նոյեմբերը լույս տեսավ «Տպագրական բանվոր»-ի ձեռագիր 10 համար։ Նույն թվականի հոկտեմբերի վերջերին բջիջի ժողովներից մեկում որոշվեց «Տպագրական բանվոր»-ը հրատարակել տպագիր։ Որոշումը գործի վերածվեց։ 1922 թ. նոյեմբերի 7-ին՝ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության 5-րդ տարեդարձի օրը, լույս տեսավ «Տպագրական բանվոր»-ի հերթական 11-րդ, բայց տպագիր առաջին համարը։ Թերթի 12-րդ համարը նորից լույս տեսավ ձեռագիր, իսկ 13-րդ համարից այն սկսեց լույս տեսնել

---

1 Դրանք են՝ զարաժի, կոմունայի և Արարատի, Ձեկայի, 2-րդ հանրակացարանի, 2-րդ մանկատան, համայսարանի, 3-րդ մանկատան, կոմկուրսի, Գողնակի, տպարանի։

2 Մեզ չի հաջողվել ստույգ որոշել նրա ստեղծման ամսաթիվը։ Ժամանակակիցների վկայությամբ, տպագրական բջիջը ստեղծվել է 1921 թ. կիսերին։

դարձյալ տպագիր։ 1922 թ. լույս է տեսել 14, 1923 թ.՝ 20, 1924 թ.՝ 12 համար։ Թերթը խմբագրել է Ալազանը։ Նրան ակտիվորեն աշխատակցել են Հրանտ Եկավյանը, Տիգրան Խորունին, Ահարոն Մոկացյանը, Անդրանիկ Շահինյանը, Զավեն Մարուխյանը, Արմո Մալխասյանը, Վահան Գրիգորյանը, Գեղամ Միքայելյանը, Սիրասը, Հովիկ Մելիքյանը և ուրիշներ։

Թեև «Տպագրական բանվոր»-ը հանդիսանում էր Երևանի տպագրական բջիջի օրգանը, սակայն այն դուրս եկավ այդ կազմակերպության շրջանակներից և իր աշխատանքի ասպարեզը հսկայական չափերով լայնացնելով հասավ Հանրապետության ամենահեռավոր ծայրամասերը, թափանցեց ողջ երիտասարդության կյանքի մեջ, դարձավ նրա պահանջների արտահայտիչը։

Թերթի տարեդարձի առթիվ խմբագրությանն ուղղված «Ողջույն, տպագրական բանվորին» հոդվածում Դարգավկոմի քարտուղար Ա. Դպիրյանը գրում է. «Մի տարի է ինչ լույս է տեսնում մեր ամենքի սրտին մոտիկ «Տպագրական բանվոր»-ը։ Մեր կազմակերպության, Հայաստանի իրականության մեջ առաջին մասսայական թերթն է եղել, որ ծնունդ առնելով բանվորական մասսայից, արձագանք է գտել Հայաստանի բոլոր մասերում, դառնալով ամեն մի բանվորի, ամեն մի գյուղացու իսկական արտահայտիչը՝ հարազատ լեզուն։ Դարալագյազի խուլ գավառն անգամ այդ մասին գիտե, որովհետև գյուղ չկա, որ «Տպագրական բանվոր»-ը ոտք դրած չլինի»[3]։ Կամ՝ «Ողջույն տրպագրական բանվորին» նամակում Քավոր Քսպոն[4] Կոտայքից հայտնում է, որ թերթը ձեռքից ձեռք է անցնում, այն շատ հետաքրքրությամբ են ընթերցում թե՛ տարեց, թե՛ երիտասարդ գյուղացիները և «դիտմամբ բարձրաձայն են ընթերցում, որ կուլակները լսեն ու լեղիները պատռվի»։

Թերթի մասսայականության մասին է խոսում նաև այն փաստը, որ սկզբնական շրջանում հրատարակվող մի քանի հարյուր օրինակ տպաքանակից 1923 թ. դարձավ 1000, 1924 թ.՝ 1500 օրինակ։

Բավական ինքնատիպ էր և բովանդակությամբ հարուստ թերթի 1922 թ. նոյեմբերի 7-ի համարը (№ 11), որ նվիրված էր Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 5-րդ տարեդարձին։ Թերթը հրապարակում է «Թող դողան ու սարսափեն համաշխարհային «Հսկաները», որովհետև նրանց «ոսկեփայլ» արևը իր վերջին մայրտմուտն է ապրում», «Թող ցնծան ու հրճվեն ծանր շրջաններում տառապող երիտասարդները, որովհետև նրանց համար է ծագելու կարմիր գալիքի բոսորափայլ արշալույսը», «Հաղթենք տգիտությանն ու խավարին—նրանք են խորհրդային իշխանության ամենագլխավոր թշնամիները» լոզունգները։

Թերթի 13-րդ համարը, որը լույս է տեսել 1922 թ. նոյեմբերի 29-ին, բնականաբար, նվիրված էր Հայաստանում սովետական կարգերի հաստատման 2-րդ տարեդարձին։ Այդ համարում տպագրված «Միացյալ-անկախիստների» ողբալի վախճանը» հոդվածում Վ. Անողոքը (Ալազան) շարադրելով Սովետական Հայաստանի աշխատավորության ձեռք բերած հաջողությունները, ընդգծում է, որ այժմ երիտասարդության հարվածային գործն է՝ լայն պայքար ծավալել ժողովրդական տնտեսության վերականգնման համար։ Դա իր ար-

3 «Տպագրական բանվոր», № 12 (26)., 1 օգոստոսի, Երևան, 1923։

4 Քավոր Քսպոն այն ժամանակ ակտիվ կոմերիտական աշխատող Հարություն Մկրտչյանն է, այժմ թոշակառու։ «Տպագրական բանվոր», 8 մարտի, Երևան, 1923։

տացոլումն է գտել նաև թերթի նույն համարում տպագրված Ե. Դանչոյի հետևյալ ոտանավորի մեջ.

Ես առանձին՝ գրաշար եմ,
Թերթ եմ շարում, բրոշյուր,
Դու խմբագիր, նա գրագետ
Լույս ենք սփռում ամեն օր։

Մեկը դարբին՝ խոփն է շինում,
Մուրճն ու մանգաղ, գերանդին,
Մյուսը՝ ռանչպար, ցանք է անում
Հաց է տալիս ամենքին։

Հիրավի ծնունդ առնելով և հիմնականում իր գործունեությունը ծավալելով վերականգնման տարիներին, կոմերիտական օրգանի գլխավոր թեման պետք է լիներ և եղել է ժողովրդական տնտեսության բոլոր ոլորտներում երիտասարդության լայն մասսաների ակտիվ մասնակցությունը ապահովելու գործը։ Սակայն «Տպագրական բանվոր»-ը քիչ տեղ չի հատկացրել նաև հայ պատանիներին ու աղջիկներին բանվոր դասակարգի հեղափոխական տրադիցիաներով, պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու կարևոր հարցերին։ Թերթի էջերը բազմիցս տրամադրվել են կուսակցական-պետական, հեղափոխական գործիչների, ինչպես նաև աշխատանքի հերոսների կյանքի ու գործունեության պրոպագանդմանը։

Ուշագրավ է հատկապես «Տպագրական բանվոր»-ի 1923 թ. նոյեմբերի 29-ի համարը։ Նրա չորս էջերում համառոտ կենսագրական տվյալներ են (նրկարներով) տպագրված Ալեքսանդր Մյասնիկյանի, Սարգիս Կասյանի, Սարգիս Լուկաշինի, Աշոտ Հովհաննիսյանի, Սաքո Համբարձումյանի, Ասքանազ Մռավյանի, Ավիս Նուրիջանյանի, Ստյոպա Ալլահվերդյանի, Հայկ Ադատյանի, Արտաշես Կարինյանի, Եղիա Զուբարի, Արմենակ Ղարագյոզյանի, Դրաստամատ Տեր-Սիմոնյանի, Արամ Շահգելդյանի, Արմենակ Բուդաղյանի, Գումեղինի (Գուրգեն Մելիք-Դադայան). Կարապետ Սարուխանյանի մասին։

«Տպագրական բանվոր»-ը բացառիկ կարևոր նշանակություն էր տալիս երիտասարդության գեղարվեստական դաստիարակության հարցերին։ Նրա «Բանվորական գրականություն և գեղարվեստ» բաժնում սիստեմատիկաբար տպագրվում էին բանաստեղծություններ, պատմվածքներ, ակնարկներ, ֆելիետոններ և այլ ժանրի ստեղծագործություններ։ «Տպագրական բանվոր»-ի էջերում են տպագրվել Ալազանի, Նաիրի Զարյանի, Գուրգեն Մահարու, Վահան Դերիգորյանի մի շարք բանաստեղծությունները։ Թերթը հատուկ տեղ էր տալիս նաև բանվոր և գյուղական երիտասարդության գեղարվեստական ստեղծագործություններին, խրախուսում և ոգևորում էր նրան գրել բանաստեղծություններ ու պատմվածքներ։

Հարկավ, բազմազան էր «Տպագրական բանվոր»-ի թեմատիկան։ Այն ընդգրկում էր երիտասարդության կյանքի տարբեր հարցերը։ Թերթի խմբագրումը և լույս ընծայումը կատարվել է հասարակական հիմունքներով։ «Կյանքը բջիջներում», «Դպրոցական կյանք», «Պատկոմական», «Բանվորական կյանք», «Դավառներում», «Կուսակցական կյանք», «Մանկատնային կյանք» մշտական

բաժիններում կոմերիտական օրգանը պարբերաբար հոդվածներ ու թղթակցություններ էր զետեղում հանրապետության տարբեր վայրերում տեղի ունեցող բարեփոխումների, կոմերիտական կազմակերպությունների նախաձեռնությունների, երիտասարդության ուսուցման, կրթության, աշխատանքի, կենցաղի և այլ հարցերի մասին։

Թերթի դերը մեծ էր նաև նրանով, որ նա հարուստ փաստական նյութ էր տալիս ուսումնասիրողներին՝ տպագրական բջիջի (և ոչ միայն տպագրական բջիջի) պատմությունը վերարտադրելու համար։ «Կյանքը մեր բջիջում» մրցտական բաժնում թերթը սիստեմատիկաբար նյութեր է հրապարակել տպարանի կոմերիտական կազմակերպության աշխատանքների, նրա կազմակերպած միջոցառումների մասին։ Ուշադրության արժանի է հատկապես այն հանգամանքը, որ «Տպագրական բանվոր»-ը իր էջերում զետեղում էր կոմերիտական ժողովների նյութերը՝ արձանագրություններն ու ընդունված որոշումները։ «Տպագրական բջիջի արտակարգ ժողովի արձանագրությունից» հոդվածում, կազմակերպության քարտուղար Անարոն Մոկացյանը պատմում է, որ 1924 թ. փետրվարի 27-ին տեղի ունեցավ բջիջի ժողովը, ուր քննարկման էր դրված «Գերմանիայի երեք բջիջների հետ կապ ստեղծելու» հարցը, որի շուրջը զեկուցումով հանդես է եկել Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմի քարտուղար Գումեդինը (Գուրգեն Մելիք-Դադայան)։ Այնուհետև, զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությամբ հանդես է եկել 12 մարդ, որից հետո ընդունվել է հետևյալ որոշումը. «Նամակագրության միջոցով կապ հաստատել Հայլբրոմ, Հալլե և Մանհեյմ քաղաքների թղթի արդյունաբերության մեջ աշխատող բջիջների հետ։ Միմյանց ծանոթացնել ձեռք բերված հաջողություններին ու աշխատանքի դրական փորձին»[5]։

«Տպագրական բանվոր»-ի գործունեությունը թերի կլիներ, եթե չնշենք նրա մի այլ կարևոր նշանակություն ունեցող աշխատանքի մասին։ Այն նշանակալից դեր խաղաց ժուռնալիստական կադրերի պատրաստման գործում և հանդիսացավ այն օրգանը, որի շուրջը համախմբվեցին հարյուրավոր բանվոր թղթակիցներ, որոնք համապատասխան դաստիարակություն ստանալով ու անհրաժեշտ փորձ ձեռք բերելով, հետագայում դարձան շնորհալի ժուռնալիստներ։ Բավական է նշել, որ միայն մեկ տարում «Տպագրական բանվոր»-ը աճեցրել է ավելի քան 15 երիտասարդ թղթակիցներ, որոնք ժուռնալիստական աշխատանքի անցան «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում։ Դրանց թվում էին Սերգո Փարսադանյանը, Անարոն Մոկացյանը, Զավեն Մարուխյանը, Արմո Մալխասյանը, Անդրանիկ Շահինյանը և ուրիշներ։

Թե որքան մեծ էր «Տպագրական բանվոր»-ի դերը երիտասարդության կոմունիստական դաստիարակության գործում, վկայում է Թեկուզ «Ավանգարդ»-ի խմբագրության ողջույնի հեռագրի (թերթի երկրորդ տարեդարձի առթիվ) հետևյալ տողերը.

«Դու (խոսքը «Տպագրական բանվոր»-ի մասին է—Վ. Ս.) այս երկու տարում մտել ես մեր բոլոր գործարանները, գյուղերը, խավար անկյունները, հընչեցրել ես քո ձայնը, տարածել ես քո լույսը, գիտակցության ես հրավիրել ու կազմակերպել աշխատավոր երիտասարդությանը իր հարազատ կազմակերպության Կն միության շուրջը։

---

5 «Տպագրական բանվոր», № 4, 7 մարտի, Երևան, 1924։

Դու քո ծոցում կրթել ես երիտասարդ բանվորի ու գյուղացու անվարժ գրիչը, ուղղել ես նրանց թոթովանքները և դարձրել ես նրանց իրենց կոչումն յուրացրած թղթակիցներ։

Էսոր, թե՛ «Խորհրդային Հայաստանում», թե՛ «Ավանգարդում» և թե՛ բոլոր թերթերում քո պատրաստած թղթակիցները փայլում են շարունակ»[6]։

Հայաստանի ուսանող երիտասարդության կյանքում խոշոր իրադարձություն է Երևանի պետական Համալսարանի ուսանողական խորհրդի օրգան՝ «Նոր ուսանող» ամսագրի հրատարակումը, որի առաջին և միակ համարը լույս տեսավ 1924 թ. մարտին, Համալսարանի հիմնադրման երրորդ տարեդարձի առթիվ։ Ը դեպ, երկար ընդմիջումից հետո՝ 1940 թվականին շարունակվել է նրա հրատարակումը, սակայն այս անգամ արդեն «Ուսանողների գիտական ընկերության աշխատությունների ժողովածու» անունով։

Ամսագրի առաջին համարը բացվում է Հայկ Աղատյանի «Լենինի գիտական ու գրական գործը» հոդվածով, որտեղ հեղինակը հանգամանորեն պատմում է մեծ առաջնորդի կյանքն ու հեղափոխական գործունեությունը, ցույց տալիս Վ. Ի. Լենինի գիտական ու գրական ժառանգության կարևորագույն նշանակությունը մարքսիստական տեսության զարգացման գործում։ «Շահագործվող մարդկության համար Լենինը մի ամբողջ պատմական դարաշրջանի հանճարեղ ներկայացուցիչ էր,—եզրափակում է Հ. Ազատյանը իր հոդվածը,—կապիտալիզմից դեպի սոցիալիզմը տանող դարաշրջանի ներկայացուցիչը։ Միջազգային պրոլետարիատի հեղափոխական կռվի անդուղական կազմակերպիչն ու ղեկավարը, նրա կամքի լավագույն ու հարազատ արտահայտիչը, նրա շարժման մեծ իդեոլոգն էր Լենինը»։

Հակոբ Հովհաննիսյանը[7] («Հակ. Հովհ.» ստորագրությամբ) «Նոր ուսանող» ամսագրի առաջին համարի լույս ընծայման առթիվ ողջունելով նրա խմբագրությանը, կոչ է անում ուսանողներին, տիրապետել գիտության բարձունքներին, գիտություն և գիտակցություն մտցնել աշխատանքի մեջ, «Աշխատանքի գիտական կազմակերպությունը, դա մեր այժմյան լոզունգն է»,—գրում է նա։

«Նոր ուսանող»-ը իր էջերում զետեղել է Ս. Լուկաշինի «Որ դեպքում համալսարանը կարող է ծառայել իր նպատակին», Աշոտ Հովհաննիսյանի «Հին ու նորը», Ասքանազ Մռավյանի «Ում ենք պարտական» հոդվածները։ Այդ հոդվածներում նրանք հանդես են եկել քաղաքական-տնտեսական կարևորագույն հարցերի շուրջը, առաջ քաշել երիտասարդության գաղափարական դաստիարակության խնդիրը։

«Պիտի ջանանք, որ նա (Համալսարանը—Կ. Ս.) կարողանա իր հարկի տակ մտցնել այն գիտությունը, որ շատ չէ ընդունված մինչև այժմ։ Խոսքը լենինիզմի մասին է, որ գլխավոր ուղեցույցը պիտի լինի Համալսարանի հետագա աշխատանքների ընթացքում։ Հայաստանի շինարարությունը առանց լենինիզմի չի կարող առաջնորդվել, որովհետև Լենինը ոչ միայն հեղափոխական, այլև խորը գիտնական էր։ Նա մեր դարի գիտության վերջին խոսքը յու-

---

6 «Տպագրական բանվոր», № 8, 19 հուլիսի 1924 թ.

7 Հակոբ Հովհաննիսյանը օրմիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր էր, որը 1922 թվականի մարտից նշանակվել է պետական համալսարանի ռեկտոր և աշխատել այդ պաշտոնում մինչև 1930 թվականը։

բացրել էր և կապել այդ պրոլետարիատի դասակարգային մարտի հետ»,— գրում էր Ա. Մռավյանը։

Այդ տարիներին, երբ հանրապետության աշխատավորությունը կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ իր ամբողջ ուժերն էր լարել վերականգնելու գյուղատնտեսությունը, Հայաստանում զգացվում էր գյուղատնտես մասնագետների պակասը։ 1923 թ. դրանց թիվը հասնում էր 12-ի։ Ամսագիրը առաջ քաշեց գյուղատնտես մասնագետների պատրաստման բացառիկ կարևոր խնդիրը։ «Մեր գյուղին անհրաժեշտ են առաջին հերթին գյուղատնտեսներ»,—գրում էր «Նոր ուսանող»-ը։

«Եվրոպայի անդրկովկասյան ուսանողության համագումարի առթիվ» հոդվածում Հ. Եկավյանը պատմում է, որ 1923 թ. հոկտեմբերին Բեռլինում կայացած անդրկովկասյան ուսանողության համագումարը որոշել է կանգնել խորհրդային պլատֆորմի վրա, կապ հաստատել Անդրկովկասի տեղական ուսանողական կազմակերպությունների հետ։ «Սա պատմական մի արժեքավոր գործ է,—գրում է Հ. Եկավյանը,—անկախ ազգությունից, Անդրկովկասի ուսանողությունը, նրա ավելի պրոգրեսիվ ու հեղափոխական մասը Եվրոպայում ձեռք-ձեռքի տված, մի կողմից հետևում է հեղափոխական Մոսկվային՝ ԽՍՀՄ առօրյա կյանքին, մյուս կողմից նոր ստեղծագործ աշխատանքների հիմքեր դնում իր առօրյա կյանքում»։

Հայ ուսանողության առաջին ամսագրի էջերում են տպագրվել Դուրգեն Մահարու «Ես», «Երևանը ամռան», «Հովհ. Թումանյանի հետ», Նաիրի Զարյանի «Աերոկարոտ» բանաստեղծությունները։

Վերականգնման շրջանի դժվարությունները հնարավորություն չտվեցին ամսագրին ծավալելու իր գործունեությունը և հրատարակվելով մեկ համար, դադարեց լույս տեսնելուց։ Սակայն այն ուշագրավ երևույթ է սովետահայ երիտասարդական մամուլի պատմության մեջ։ Նրա հանդես գալը և պարունակած նյութերը ցույց տվեցին երիտասարդական ամսագրի անհրաժեշտությունը, որը ավելի ակնհայտ դարձավ հետագայում, երբ 1940 թ. վերստին լույս տեսան «Ուսանողների գիտական ընկերության աշխատությունների ժողովածու» ամսագիրը և 1935 թվականից՝ «Հարվածային ուսանող», իսկ 1950 թվականից՝ «Սովետական ուսանողություն», «Երևանի համալսարան» թերթը։

Վերականգնման շրջանում ծնվեց նաև Ադրբեջանի կոմունիստական երիտասարդական միության Լեռնային Ղարաբաղի շրջկոմի օրգան «Երիտասարդ լենինիստ» թերթը։ Այն լույս է տեսել 1924 թվականին Ստեփանակերտում հրատարակվող «Խորհրդային Ղարաբաղ»-ի 4-րդ էջում, երբեմն էլ առանձին։ Ընդամենը յոթ համար։ Նրա առաջին համարը լույս է տեսել 1924 թվականի մայիսի 1-ին, իսկ վերջին՝ 7-րդ համարը՝ նույն թվականի դեկտեմբերի 28-ին։ Դա այնպիսի ժամանակաշրջան էր, երբ կոմունիստական կուսակցության ձեռնարկած մի շարք միջոցառումների շնորհիվ, որոշ չափով վերակենդանացել էր ժողովրդական անտեսությունը, բարելավվել էր բանվորների և գյուղացիների նյութական դրությունը և պայմաններ էին ստեղծվել նրանց կուլտուրական մակարդակի բարձրացման ու քաղաքական գործունեության ուժեղացման համար։ Ստեղծված այդ պայմանները կոմերիտմիության առաջ դրեցին նոր խնդիրներ։ Անհրաժեշտ էր է՛լ ավելի ամրապնդել կոմերիտական կազմակերպությունները, լուրջ ուշադրություն դարձնել կոմերիտմիության հա-

սարակական-քաղաքական գործունեության բարձրացման հարցերին, լայն տեղ տալ մասսայական ինքնագործունեության զարգացմանը, բանվոր և գյուղական երիտասարդության շրջանում պրոպագանդել մարքսիզմ-լենինիզմի անհաղթ ուսմունքը, այն դարձնել նրա սեփականությունը։

Կոմերիտմիության առջև դրված այդ խնդիրների կատարման գործում հայ երիտասարդության մասնակցությունը ապահովելու, նրան կազմակերպելու ուղղությամբ խոշոր դեր խաղաց «Երիտասարդ լենինիստ»-ը։

Թերթի առաջին համարը, որը լույս տեսավ 1924 թ. մայիսի 1-ին, բնականաբար, նվիրված էր աշխատավորության միջազգային համերաշխության տոնին։ Այն հրապարակեց «Կեցցե աշխատավորության միջազգային համերաշխության օրը՝ մայիսի 1-ը», «Կեցցե ամբողջ աշխարհի պրոլետար երիտասարդությունը» լոզունգները.

1924 թ. հունիսի 1-ին տեղի ունեցավ Ղարաբաղի կոմերիտմիության անդրանիկ կոնֆերանսը, որտեղ հանրագումարի բերվեց կոմերիտական կազմակերպությունների 10-ամսյա աշխատանքի արդյունքները և միջոցառումներ նշվեցին հետագա աշխատանքի համար։ Այդ օրը լույս տեսավ «Երիտասարդ լենինիստ»-ի հերթական 4-րդ համարը։ Ընդսմին, այն հրատարակվեց առանձին, որպես ինքնուրույն թերթ, չորս էջից բաղկացած։ Թերթի այդ համարի առաջին էջի ճակատը զարդարում էին «Կեցցե Ղարաբաղի ԿԵՄ անդրանիկ կոնֆերանսը, որը պիտի իր աշխատանքները տանի ու առաջիկա գործունեության ուղիները ցույց տա լենինիզմի կարմրավառ դրոշի տակ», «Հաստատորեն ու անշեղ կերպով բանվորա-գյուղացիական դասակարգի ու նրա առաջապահ կոմունիստական կուսակցության հետ համերաշխ—դեպի սոցիալիզմ» լոզունգները։

«Միության հերթական խնդիրները և Ղարաբաղի կազմակերպությունը» հոդվածում Արմեն Սյունին խոսում է Ղարաբաղի տնտեսական ու կուլտուրական առանձնահատուկ պայմանների մասին, ցույց տալիս, որ նա հանդիսանում է զուտ գյուղատնտեսական երկիր, ուստի կոմերիտմիության գործունեությունը հիմնականում պետք է կենտրոնանա գյուղական երիտասարդության վրա, որը պետք է հոգ տանի այդ երիտասարդության կուլտուրական-քաղաքական զարգացման մասին։ Հոդվածում որոշակիորեն տրվում են այն խնդիրները, որոնք դրված են կոմերիտական կազմակերպությունների առջև։

«Մեր բջիջները պիտի անհապաղ անցնեն եռանդուն աշխատանքի, սերտ կապ հաստատելով գյուղական իշխանության ու առանձնապես կոմբջիջների հետ, որի միջոցով մեր տեղական ընկերները հնարավորություն կստանան յուրացնել կուսակցության ամբողջ հեղափոխական փորձառությունը, հին գվարդիայի հեղափոխական ավանդները։ Պիտի ուժեղացվի բջիջի աշխատանքը անկուսակցական երիտասարդության, մանավանդ բատրակների մեջ, որի համար բջիջը պիտի ուժեղացնի քաղխմբակի աշխատանքը, յուր ամբողջ կուլտուրական կրթական աշխատանքը կենտրոնացնի գյուղական խրճիթ-ընթերցարաններում ու ակումբներում։ Բջիջը պիտի յուր եռանդուն մասնակցությունը ցույց տա գյուղական կոոպերացիայի ու արտելների կազմակերպման ու ծավալման մեջ։ Բջիջը պիտի մեծ մասնակցություն ունենա գյուղի շինարարական, տնտեսական կյանքում ու հանդիսանա նոր խորհրդային գյուղի իսկական ստեղծագործիչը։ Վերջապես բջիջը պիտի հիշի մեր մեծ առաջնորդի, Իլյիչի մեկ թողած պատգամները ու անցնի նրա թողած ուսմունքի, բանվո-

բա-գյուղացիական դասակարգի միակ ու հաստատուն զենքի՝ լենինիզմի ուսումնասիրությանը»։

Թերթը այդ նույն համարում տպագրել է «Ընկ. Կալինինը ԿԵՄ միության անելիքների մասին» հոդվածը։ Պարզ ու մատչելի լեզվով գրված այս հոդվածում պատմվում է Մ. Ի. Կալինինի կողմից գյուղի կոմերիտական կազմակերպությունների առաջ դրած խնդիրների մասին։ «Քաղաքական և տնտեսական բացառիկ նշանակություն է ստանում կոմերիտմիության կազմակերպությունը գյուղում,— ասվում է այդ հոդվածում,— կոմերիտմիությունն իր մեջ պիտի ընդունի գյուղական երիտասարդության (գյատանիների և աղջիկների) ամենաառաջավոր խավերին, բատրակներին ու չքավորներին (առաջին հերթին) և միջակներից ամենալավերին»։

Գյուղի կոմերիտական կազմակերպությունների, ողջ երիտասարդության անելիքների մասին են պատմում նաև 1924 թ. դեկտեմբերի 28-ի համարում տպագրված «Մեր միության անդամների քաղաքական դաստիարակությունը և միասնական քաղ-կրթական սիստեման» և «Լենինյան կոմերիտականը գյուղում պիտի մտածի կոոպերացիայի կազմակերպման մասին» հոդվածները։ Այդ հոդվածներում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ գյուղի կոմերիտականը պետք է քաղաքականապես պատրաստված լինի, որպեսզի ինքը իր անձնական օրինակով կրթի ու դաստիարակի երիտասարդությանը։ Կոմերիտականը պետք է գյուղացուն բացատրի կոոպերացիայի առավելությունը, իր անձնական մասնակցությամբ հիմք դնի գյուղական կոոպերատիվին, որը հանդիսանում է սոցիալիստական գյուղի հիմնաքարը։

«Երիտասարդ լենինիստ»-ը անողոք պայքար է մղել հին, հետամնաց սովորությունների, կրոնի, տգիտության ու խավարի դեմ։ Նրա էջերում տպագրված բազմաթիվ հոդվածներում բացահայտվել է կրոնի հակամարքսիստական էությունը, կոչ արվել երիտասարդությանը լայն պայքար ծավալել կրոնամոլության դեմ, հանուն նոր կենցաղի։

* * *

1921—1925 թվականներին կոմերիտմիության օրգանները հրատարակեցին բազմաթիվ կոչեր ու միօրյա թերթեր, որոնք երիտասարդական զանգվածներին էին հասցնում կուսակցության ձեռնարկած միջոցառումների և որոշումների էությունը, հասարակական լայն կարծիք ստեղծում դրանց շուրջը։

1921 թ. ՀԿԵՄ Ալեքսանդրապոլի քաղաքային առաջին կոնֆերանսը ողջունելով աշխատավորության միջազգային համերաշխության տոնը՝ մայիսի 1-ը, իր ընդունած կոչում գրում է. «Այսօր, այս նվիրական տոնի օրին Խորհրդային Հայաստանի բանվորությունն ու գյուղացիությունը կանգնած է տընտեսական ծայր աստիճան քայքայված իրականության հանդեպ։

Այսօր, երբ սկսվում է շինարարական մեծ աշխատանք, բանվոր ընկեր, դու պետք է գիտակցես, որ անգործ նստելը ոճրագործություն է, որ ամեն մեկը պարտական է ասպարեզ հանել իր ուժերից գերադույնը, ստեղծելու շինարարական մեծ աշխատանք և ձգտելու կոմունիզմին»։ Կոնֆերանսը կոչ է անում Հայաստանի բանվորա-գյուղացիական երիտասարդությանը՝ «համախմբվել կոմունիստական երիտասարդական միության դրոշի շուրջը, միահա-

մուռ ջանքերով մաքառել երկրի քայքայված տնտեսության դեմ և բարձրացնել տնտեսական և կուլտուրական մակարդակը երկրում»:

1921 թ. հոկտեմբերի 27-ի կոչում կոմերիտմիության Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեն մերկացնելով ժողովրդի թշնամիների կողմից տարածված կեղծ ու զրպարտիչ լուրերը, որ իբր Սովետական Հայաստանը 1901 և 1902 թ. ծնվածների զորակոչ հայտարարելով պատրաստվում է պատերազմի, գրում է. «Շնորհիվ խորհրդային կառավարության ձեռք առած միջոցների, խորհրդային իրավակարգին և մեր մեծ դաշնակից խորհրդային Ռուսաստանի օգնության, Հայաստանի աշխատավորությունը ամուր հիմքեր է դրել երկրի վերաշինման... Հեռու չէ այն օրը, երբ մենք կունենանք խորհրդային հայրենիքը պաշտպանող մի ընդհանուր զորք: Մեր թիկունքումն է կանգնած մեր մեծ եղբայրն ու օգնականը՝ խորհրդային Ռուսաստանը»[9]: Այնուհետև կոչ է արվում երիտասարդությանը մեկնելու կարմիր բանակի շարքերը, պաշտպանելու հայրենիքը:

1921 թ. դեկտեմբերի 15-ին Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեն, սովետների ընտրություններում երիտասարդության մասնակցությունն ապահովելու նպատակով հրատարակեց մի դիմում, որով կոմերիտմիության գավկոմը ընտրողներին կոչ է անում ձայն տալ կոմունիստներին[10]:

Ուշադրության արժանի են Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեի նաև 1923 թ. հրատարակած կոչերը, որոնցից մեր ձեռքն է ընկել երկուսը: Դրանցից մեկը 1923 թ. հոկտեմբերի 25-ի կոչն է, որը նվիրված է մեծ Հոկտեմբերի 5-րդ տարեդարձին:

«Այսօր հոկտեմբերի կարմիր շողերի տակ ամբողջ երկրագունդն է զարթնում,—ասված է այդ կոչում,—և հեղափոխական պրոլետարիատը, մուրճը ձեռքին, հեղափոխության կարմիր սալի վրա, համաշխարհային հորիզոնում դարբնում է մի նոր արև»:

Անդրադառնալով երիտասարդության խնդիրներին, կոչը նշում է. «Երիտասարդ աշխատավորությունն էլ, 5-րդ տարեդարձին (Հոկտեմբերյան հեղափոխության—Վ. Ս.), պիտի լարի յուր ուժերը, խտացնի յուր շարքերը, կոմունիզմի ճանապարհը հարթելու համար»[11]:

Ահա և երկրորդ կոչը, որ ուղղված է ՀԿԵՄ Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեի հրահանգիչներին, գյուղական կոմերիտական կազմակերպություններին և բոլոր կոմերիտականներին. «Միասնական գյուղատնտեսական հարկի գանձման, նախնական հաշվառման աշխատանքները մեր գավառում սկսվել են: Անդրկովկասյան կենտգործկոմի հրատարակած դեկրետը միասնական հարկի առթիվ լայն մասսաների սեփականություն պիտի դարձնել:

Միասնական գյուղատնտեսական հարկի ամբողջ աշխատանքների ընթացքում, մեր նշանաբանը պիտի լինի՝ ագիտացիան լայն մասսաների մեջ»[12]:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև ՀԿԵՄ էջմիածնի գավառային կոմիտեի 1923 թ. կոչը՝ ուղղված գավառի բոլոր կոմերիտականներին և ողջ աշխատավոր երիտասարդությանը «Կարմիր նավատորմի շեֆությունը» վերդ-

8 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 53, գ. 16:
9 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 53, գ. 14:
10 Նույն տեղում:
11 Նույն տեղում, ա. 74:
12 Նույն տեղում:

նելու մասին, որտեղ ասված է. «Կոմերիտմիությունը իր համառուսական 9-րդ համագումարում ընդունեց կարմիր նավատորմիղի շեֆությունը։ Նույնը արել է և Անդրկովկասյան միությունը՝ վերցնելով շեֆությունը Սև և Կասպից ծովերի նավատորմիղի։ Երիտասարդ կարմիր նավատորմիղի երիտասարդ շեֆը ամենուրեք և ամեն ժամանակ պետք է հիշի իր խնդիրները՝ այն է ֆիզիկական, բարոյական ջերմ օգնություն»[13]։

1923 թ. հայերեն լեզվով բազմաթիվ միօրյա թերթեր է հրատարակել կոմերիտմիության Անդրկովկասյան երկրային կոմիտեն։ Հիշատակման արժանի են 1923 թ. հունվարի 7-ին՝ «Կորչի կրոնը» և նույն թվականի մայիսի 1-ին հրատարակված «Կարմիր մայիս» միօրյա թերթերը։ «Կորչի կրոնը» թերթը նվիրված էր «Կոմերիտմիության զատիկին»։ Թերթի առաջին էջի ճակատին մեծատառ դրված է. «Կրոնը այն թույնն է, որով բուրժուազիայի վարձկան տերտերները թունավորում են աշխատավոր բանվորի և գյուղացիների գիտակցությունը, նրանց շահագործելու համար»։

«Նոր կուլտուրայի կրողները» հոդվածում թերթը խոսելով երիտասարդության դերի մասին երկրի խաղաղ շինարարական աշխատանքներում, գրում է, որ կոմերիտմիությունը կոմունիստական կուսակցության հույսն է, Հոկտեմբերյան հեղափոխության սպագույն, որն այսօր փոխարինելով հին գվարդիայի ներկայացուցիչներին, աստիճանաբար մտնում է իր իրավունքների մեջ և մեծ ծառայություններ մատուցում սովետական շինարարությանը։

Հարուստ և բովանդակալից են ձևավորված թերթի էջերը։ Ուշագրավ են, հատկապես, նրա ծաղրանկարները։ Ահա դրանցից երկուսը։ Առաջին էջում նկարված են մի խումբ տերտերներ և կոմերիտականներ, որտեղ տերտերները անիծում են կոմերիտականներին՝ «Աստված Ձեզ անիծի, կոմսոմոլիստներ», իսկ վերջիններս արհամարհական տոնով ծիծաղում են նրանց վրա։ Երկրորդ ծաղրանկարը կոչվում է «Աստծո մոցիկուլիները օգնում են սովյալներին»։ Այստեղ պատկերված է, թե ինչպես մի խումբ տերտերներ ժողովրդին խաբած օրվա վաստակը տոպրակը լցրած տանում են, իսկ աղքատ գյուղացին՝ կնոջ ու երեխայի հետ, սովից տանջված, նայում են նրանց։

«Կորչի մարդկության տանջանքի և արցունքի աղբյուր կրոնը», «Կեցցե աշխատանքի տոնը՝ կոմսոմոլյան զատիկը»,—ազդարարում էր թերթը։

Մայիսի 1-ի տոնին նվիրված «Կարմիր մայիս» միօրյա թերթը իր «Բանվոր երիտասարդությունը և մայիսի մեկը» առաջնորդող հոդվածում գրում է. «Մեզ, լայնածավալ խորհրդային ֆեդերացիայի երիտասարդ բանվորներիս համար, այս տոնը ոչ միայն գարնանային տոն է, այլ սա բանվոր դասակարգի հաղթանակի տոնն է, հաղթանակի, որ ձեռք է բերվել մեր մեծ ընկերների արյունով։ Այսօր երիտասարդ բանվորությունը, կուռ շարքերով՝ զինված դասակարգային հզոր գիտակցությամբ տոնում է իր հաղթանակի տոնը և կոչ է անում կապիտալիստների ճիրաններում տառապող բանվոր երիտասարդությանը համախմբվելու ու միահամուռ գրոհով խորտակելու կապիտալի թագավորությունը»։ Առաջնորդող հոդվածը վերջում իր զայրույթն ու բողոքն է հայտնում դեղին և համաձայնողական ինտերնացիոնալների դեմ, որոնք մրթագնում են բանվոր երիտասարդության գիտակցությունը։ Թերթը հրապարակեց «Կեցցե համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը», «Կեցցե

13 Նույն տեղում, ֆ. 52, գ. 184։

պրոլետարիատի համագործակցության և միասնական ճակատի օրը՝ մայիսի մեկը», «Կեցցե համաշխարհային հեղափոխական պրոլետար երիտասարդության շտաբը՝ երիտկոմինտերնը» և այլ հեղափոխական լոզունգներ։

1924 թ. փետրվարի 1-ին Երևանում բացվեց նախկին երիտասարդ դաշնակցականների (ուսանող-աշակերտների) համահայաստանյան համագումարը[14]։ Նախկին երիտասարդ դաշնակցականների համահայաստանյան համագումար նախաձեռնող բյուրոն, համագումարի բացման օրը հրատարակեց «Բանբեր» միօրյա թերթը։ «Մեր համագումարի անելիքները» առաջնորդողում թերթը գրում է. «Երիտ. դաշնակցականների համահայաստանյան համագումարը գալիս է ձևակերպելու քայքայված կուսակցության երիտասարդ, կենսունակ տարրի՝ ուսանողության և աշակերտության բեկումը»։

«Մեր համագումարը լինելու է քննադատության, վերագնահատման մի պրոցես,—շարունակում է առաջնորդող հոդվածը,—ուր «արժեքների» բացասման ու կործանման առաջն անգամ կանգ չի առնի, համագումարը կժխտի դաշնակցության «ընթացիկ իդեոլոգիան», կթաղի նրա «փթած դիակը»։

«Բանբեր»-ում տպագրվել է նաև նախկին երիտասարդ դաշնակցականների համագումար նախաձեռնող բյուրոյի դեկլարացիան, որտեղ մերկացվում է դաշնակների քաղաքական սնանկությունը, որը դարձել է Անտանտի հավատարիմ գործակալը, պատճառ դարձել ազգամիջյան կռիվների ու ջարդերի, երկիրը հասցրել տնտեսական քայքայման աստիճանի։ Այնուհետև, ցույց է տրվում, որ քաղաքացիական կռիվներում ջախջախիչ պարտություններ կրելով, դաշնակները իրենց գործունեությունը տեղափոխեցին հանրապետությունից դուրս, միացան Ռուսաստանի և Անդրկովկասի հակահեղափոխական կազմակերպություններին և սկսեցին բացահայտ ճիգեր գործադրել երկրի քաղաքական-տնտեսական վերածնությունը խանգարելու համար։ «Այսօր հավաքվող համագումարը,—ասված է դեկլարացիայում,—պիտի իր վճռական խոսքը ասի՝ որ կուսակցության երիտասարդ թևը այլևս նրանց հետ չէ, որ նա հարում է խորհրդային իշխանության և կոմունիստական ինտերնացիոնալին, որ նա խզում է կապը դաշնակցական կոչված հակահեղափոխական կուսակցության հետ և թույլ չի տալու խոսելու իր անունից»։

Կոմերիտմիության Դիլիջանի գավառային 3-րդ կոնֆերանսին է նվիրված 1924 թ. հունիսի 14-ին հրատարակված «Լենինյան ուղիով» միօրյա թերթը։ Նրանում տպագրվել են «Մեր համագումարը», «Պատկազմակերպության մեջ կատարվելիք աշխատանքների մասին», «Աշխատանքի ձևեր թուրք բջիջներում», «Աշխատանքը բատրակների մեջ», «Մեր հաջողությունների մասին» և ուրիշ հոդվածներ, որոնց մեջ առաջ է քաշվում կոմերիտական կազմակերպությունների խնդիրները՝ երիտասարդության դաստիարակության գործում, ինչպես նաև կոմերիտական կազմակերպությունները կազմակերպորեն ամրապնդելու, նրա շարքերը ընդլայնելու կարևոր հարցերը։

Թերթում տպագրվել է նաև կուսակցության Դիլիջանի գավառային կոմիտեի «հրահանգ-նամակը» ուղղված կուսակցության շրջանային բոլոր հրահանգիչներին և կազմակերպության քարտուղարներին։ Ելնելով կուսակցության

---

14 Համագումարի օրակարգի հարցերն էին՝ 1) Նախաձեռնող բյուրոյի ինֆորմացիոն զեկուցումը. 2) Ներկա մոմենտը. 3) Զեկուցում դաշնակցության գործունեության և պատմության մասին. 4) Ազգային հարցը և սովետական իշխանությունը. 5) Երիտասարդության դերը դաշնակցության մեջ։

XI և XIII համագումարների որոշումներից, որոնք պարզ կերպով բնորոշել են կուսակցության վերաբերմունքը բանվորա-գյուղացիական երիտասարդության և առաջին հերթին կոմերիտմիության մեջ տարվելիք աշխատանքները, ՀԿԿ գավկոմը կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրում է կոմերիտական կազմակերպություններում տարվող աշխատանքները ուժեղացնելու հարցերի վրա։ «Պետք է այնպես անել,— ասված է այդ հրահանգում,— որ կոմերիտմիությունը համակարգ կերպով ուսումնասիրի կուսակցության պատմությունը, նրա ծրագիրն ու գործելակերպը և առհասարակ բոլոր այն ավանդները, որ թողել է մեզ ընկ. Լենինը»։

Այսպիսով, ուսումնասիրելով հայ կոմերիտական մամուլի առանձին դրրվագներ միայն, տեսնում ենք, որ նա ընդարձակ ու հավաստի տեղեկություններ է հաղորդում մեր երկրի ոչ հեռավոր անցյալի հասարակական-քաղաքական իրադարձությունների, ամենից առաջ, իհարկե, երիտասարդության աշխատանքի, կրթության, հասարակական գործունեության, կուլտուրական կյանքի մասին։ Այդ նյութերը Հայաստանի կոմերիտմիության պատմության վառ էջերն են կազմում։